

ՃԱՆԵ ԱՐՔԵՊԻՍԱԿՊՈՍ ԱՃԵՍՅԱՆԻ ԶԱՐՈՋԸ՝ ԽՈՍՎԱՆ ՄԱՅՐ ՏԱՃԱՐՈՒՄ, ԽԱՉՎԵՐԱՅԻ ՏՈՆԻՆ

(13 սեպտեմբերի, կիրակի, 1998 թ.)

*«Եւ ապա երեսեցի նշան Որդւոյ Մարդոյ յերկինս»:
(Մատթ. ԻԴ 30)*

Այսօր տօնն է խաչվերացի, Հայ Եկեղեցիի հինգ մեծ՝ տաղաւար կոչուած տօներէն մին, որ մեզ կը հաւաքէ Ս. Էջմիածնի Մայր Տաճարին մէջ, Զրիստոսի խաչափայտին շուրջ: Այսօր խաչափայտի մասունքով պիտի օրհնուի դարձեալ Հայոց աշխարհը, խնդրելով խաչեալէն որ պահպանուին վանք, անապատ, քաղաք եւ գիւղ եւ բնակեալ ժողովուրդ ի նոցա նշանաւ Ս. Խաչին եւ Ս. Աւետարանին, յանուն Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ: Այսօր երգեցինք եւ եօթը օրեր պիտի երգենք «Զօրութիւն Ս. Խաչի քո Զրիստոս, զոր կանգնեցեր ի փրկութիւն աշխարհի, սա պահեսցէ զմեզ յամենայն փորձութենէ»:

Այս մեծ տօնին առիթով աղօթող մեր բարեպաշտ ժողովուրդին ուշադրութիւնը կ'ուզեմ ուղղել դէպի այն խաչը որ փորագրուած է եւ կանգնած բազմահազար քարերու վրայ, Հայաստան աշխարհի ամէն կողմ՝ Եկեղեցիներէն ներս եւ դուրս, վանքերուն ամէն կողմերը, ժայռերու վրայ, գերեզմաններուն մէջ, աղբիւրներուն մօտ՝ վերջապէս ամենուրեք: Մեր հայրերը կանգնեցուցած են զանոնք, ուզած են որ ըլլան իւրաքանչիւրը արուեստի գեղեցիկ իրագործում: Անոնց գեղեցկութիւնը արտայայտութիւնն է մեր հայրերու սուրբ եւ մաքուր հաւատքին:

Խաչքարերուն խորհրդաւոր լուծիւնը աղօթք է եւ ներշնչում, անոնցմէ իւրաքանչիւրը հրաւիրագիր մըն է որ կը կանչէ մեզ դէպի խաչեալը, որպէսզի խաչափայտին վրայ թափուած արիւնը ըլլայ մեր ապաւենը, մեր յոյսը, դէպի Աստուած բարձրացնող սանդուխը:

Մեր հայրերը կանգնեցուցած են խաչքարը իբրեւ մնայուն աղօթք եւ խորհրդանիշ այն նշանին որ պիտի երեւի Զրիստոսի երկրորդ գալստեան, որովհետեւ անոնց հաւատքը հիմնուած է Յիսուսի այն խօսքին վրայ թէ դատաստանի օրը պիտի երեւի Մարդու Որդիի նշանը երկինքի վրայ: «Յայնժամ երեսեցի նշան Որդւոյ Մարդոյ յերկինս», ըսաւ Զրիստոս իր աշակերտներուն, երբ բացատրեց անոնց Աստուծոյ արքայութիւնը: Զրիստոսեան կը հաւատայ թէ անցնող աշխարհը զաւիթն է միւս աշխարհին որ պիտի գայ, այն աշխարհին, ուր կեանքը յաւիտեանական է: Մեր հայրերը հաւատացած են եւ քրիստոնեայ հաւատացեալը կը շարունակէ հաւատալ թէ անոնք, որոնք մեղքի կապանքներէն փրկուած են խաչի զօրութեամբ, յարութիւն պիտի առնեն իրենց գերեզմաններէն եւ պիտի ներկայանան Աստուծոյ դատաստանին եւ պիտի լսեն աստուածային դատաւորին հրաւերը. «Եկայք փրկեալքն Հօր իմոյ ժառանգեցէք արքայութիւն երկինք»:

Խաչքարին աղօթքն է «յիշեա զմեզ, յիշեա զմեզ Տէր յոթամ գաս արքայութեամբ քով եւ ողորմեա մեզ»:

Խաչքարը չի մայիր դէպի ետ, դէպի անցեալը, այլ կը նայի դէպի ապագան,

դեպի գալիքը եւ կը յիշեցնէ ամէն հաւատացեալի թէ հաշիւ պիտի տայ Աստուծոյ դատաստանին առջեւ: Այդ հաւատքէն կը բխէր մեր մախնեաց իմաստութիւնը, որովհետեւ անոնք կարողացած եւ իւրացուցած էին Աստուածաշունչին խօսքը. "Ակիզքն իմաստութեան երկիրն Տեառն" է:

Այսպէս էր անցեալին, երբ Հայաստան աշխարհը քրիստոնեայ, բարեպաշտ եւ Աստուծոյ իմաստութեամբ լեցուն աշխարհն էր: Իսկ այսօր, սիրելի եղբայրներ եւ քոյրեր: Խաչքարը ի՞նչ կ'ըսէ մեզի: Արդեօ՞ք կը խօսի մեզի: Արդեօ՞ք կը յիշեցնէ մեզի թէ ժամանակը վերջը մը ունի, ինչպէս ունեցած է սկիզբը եւ թէ երբ հասնի այդ վերջը, ան պիտի երեւի իբրեւ նշան աշխարհի վախճանին:

Այսօր, երբ մէկը այցելէ Հայաստանի թանգարաններէն մին, ուր շարուած են գեղեցիկ խաչքարեր, բացատրող մասնագէտը երկարօրէն կը ցուցադրէ իր գիտական վերլուծումը, բացատրելով թէ խաչքարի արուեստը ունի հեթանոսական մախընթաց՝ վիշապաքարը, գիտականօրէն կը բացատրէ թէ քարը տուֆ է կամ պազալթ, թէ խաչքար քանդակող մեծագոյն արուեստագէտը եղած է Մոմիկը, առանց յիշելու թէ ան վարդապետ էր եւ վանական, կը բացատրէ թէ խաչքարի արուեստը ունեցած է տաբեր ոճեր եւայլն...: Տարիներ առաջ, երբ այցելեցի Սարտարապատի նորակառոյց թանգարանը եւ համբերութեամբ մտիկ ընելէ ետք մասնագիտական այդ բացատրութիւնները, հարցուցի բացատրողին. "Բայց խաչը ի՞նչ բանի խորհրդանիշ է", պատասխանեց, շուրջը դիտելէ ետք. "Դուք աւելի լաւ գիտէք, Տէր Հայր":

Սիրելի քոյրեր եւ եղբայրներ, այսօր մէկ բան ըսել կ'ուզեմ մեզի. դուք ալ գիտցէք թէ հաշն է Աստուծոյ զօրութիւնը եւ Աստուծոյ իմաստութիւնը: Վերապրեցէք այսօր ձեր հայրերու հաւատքը: Երբ կ'արտասանէք Հայր Մերի առաջին խնդրանքը՝ *եկեացէ արքայութիւն քո՛* գիտցէք թէ գալիք արքայութեան դռները պիտի բացուին անոնց դիմաց, որոնք կը հաւատան թէ քրիստոս է մեր Տէրը եւ Աստուածը եւ այդ հաւատքը պիտի փրկէ մեզ: Պատրաստ ըլլանք գալիքին եւ յուսանք որ երբ գալ դատաստանը, պիտի չամչնանք ներկայանալու Աստուծոյ, մենք, որ յուսացինք հաշի զօրութեան: Աղօթենք փրկարար փայտին դիմաց եւ խնդրենք որ մեր մուտքը յաւիտեական կեանքէն ներս ըլլալ բերկրանքով, իբրեւ "որդիք լուսոյ եւ որդիք տուրմբեան" եւ հրեշտակներու երգին միացուցած մեր սրբասացութիւնը օրհնենք անունը Ա. երրորդութեան՝ Հօր եւ Որդւոյ եւ Ա. Հոգւոյն, յաւիտեանս. ամէն: